1908 Թ. ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Ն. Մ.

Հայ պատմագիտության մեջ տիրապետող է այն տեսակետը, թե «Իթթիհատ վե թերաքքը» (Միություն և առաջադիմություն) կոմիտեն, համագործակցելով Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի հետ և գալով իշխանության, ցույց է տվել իր ներքաղաքական իրական նպատակները միայն 1909 թ. ապրիլին (կազմակերպելով և իրականացնելով Կիլիկիայի ջարդերը), իսկ մինչ այդ, ոչ մի գործողությամբ կասկածի տակ չի դրել իր բարեկամական վերաբերմունքը հայերի նկատմամբ: Այս տեսակետի պնդումը պայմանավորված է Հայ հեղափոխական դաշնակցության և Իթթիհատի միջև կայացած բանակցություններով և 1908 թ. օսմանյան խորհրդարանի ընտրությունների թերի լուսաբանմամբ, քանի որ Իթթիհատն իր իրական նպատակները և գործելաոճը բացահայտորեն ցույց է տվել հենց խորհրդարանական ընտրություններում:

Թուրքական արդի պատմագրությունը, ձեռքի տակ ունենալով արխիվային նյութեր, շրջանցում է իրականությունը և փորձում ներկայացնել այդ շրջանի դեպքերն ու իրադարձությունները գլխիվայր: Ըստ այդմ՝ հայերը գերակշիռ դեր են ունեցել օսմանյան տնտեսության և առևտրի մեջ, սակայն չի նշվում այն մասին, որ հայերն Օսմանյան կայսրության բնակչության շոշափելի մի զանգվածն էին (մոտ 2 միլիոն) և զբաղեցնում էին ոչ պակաս շոշափելի տարածք (Արևմտյան Հայաստանը, Կիլիկիան, մի շարք հայաշատ քաղաքներ, ինչպիսին էր հենց թուրք հեղինակի բերած օրինակը՝ Տրապիզոնը, որտեղից պատգամավոր չունեցանք): Տրապիզոնի նահանգում 150 արտահանողներից 127-ը, 166 ներկրողներից 144-ը հայեր են եղել, 9800 խանութպաններից 6800-ը նույնպես հայեր են եղել[1] և այսպես տնտեսության բոլոր բնագավառներում: Այսպիսով՝ օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորների քանակը ակնհայտորեն տարբերվում է այն թվից, որը պետք է լիներ: Հնիհն գոյատևող տերության տնտեսական բեռն իր ուսերին տանող հայ ժողովուրդը վերստին խաբեության զոհ էր դառնում:

Ընդդիմադիր ուժերը Օսմանյան կայսրությունը վերջնական փլուզումից փրկելու միջոց համարում էին սուլթան Աբդուլ Համիդի վարչակարգի տապալումը: Հակասուլթանական շարժման գլուխ կանգնած էր դեռևս 1889 թ. հիմնադրված «Իթթիհատ վե թերաքքը» կոմիտեն, որի անդամներին անվանում էին երիտասարդ թուրքեր կամ երիտթուրքեր:

---

[1] **Ungor U. U. and M. Polatel** . *Confiscation and Distraction, London, 2011, p. 18.*

Երիտթուրքերը հայ ազգային կուսակցություններին՝ Հայ հեղափոխական դաշնակցություն և Սոցիալ դեմոկրատ հնչակյան կուսակցություններին առաջարկել էին միասնաբար պայքարել սուլթանական վարչակարգի դեմ: Հնչակյանները հրաժարվեցին երիտթուրքերի հետ համագործակցությունից, որովհետև ինչպես իրենք էին նշել. «...Թուրք կոմիտեն պայման կը դնէր ազգային ամեն մասնավոր պահանջում մէկդի ընել, և համաձայնիլ Միության և Առաջադիմության Օսմանյան ծրագրին վրա.[2] (ի դեպ, այդ ծրագիրը ոչինչ չէր խոստանում հայ բնակչության անձի, գույքի ապահովության մասին, այնտեղ խոսքը միայն խորհրդարան կազմելու և սահմանադրություն հռչակելու մասին էր): Այսինքն՝ սկզբից ևեթ Իթթիհատը պարզ հասկացնում էր, որ չի պատրաստվում կամ չունի որևէ ծրագիր, համաձայն որի հայկական վիլայեթներում սոցիալ-տնտեսական կամ վարչական բարենորոգումներ կիրականացվեին: Մինչդեռ Դաշնակցությունը, անտեսելով իր կուսակցության մի ստվար հատվածի հորդորները երիտթուրքերին չվստահելու վերաբերյալ, ընդունել էր համագործակցության առաջարկը՝ պատճառաբանելով, որ իրենք նախընտրել են չմերժել թուրքերի մեկնած ձեռքը և առաջնային նպատակ են համարել համիդյան վարչակարգի տապալումը.[3]

Ի վերջո՝ 1907 թ. դեկտեմբերին Փարիզում կայացած վեհաժողովում Իթթիհատի ներկայացուցիչները Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության, արաբական, հրեական ու մակեդոնական կոմիտեների հետ համաձայնության եկան համիդյան վարչակարգը միասնական ուժերով տապալելու և Թուրքիայում սահմանադրական կարգեր հաստատելու խնդիրների շուրջ և այդ առիթով ներկայացրին իրենց երեք հիմնական պահանջները.

1. *Աբդուլ Համիդի գահընկեցությունը,*
2. *ներկա վարչակարգի արմատական փոփոխությունը,*
3. *մի ներկայացուցչական վարչակարգի հաստատումը[4]:*

Երիտթուրքերը պարզորոշ հասկացրին դաշնակցականներին, որ հայերը կարող են «այլ ժողովուրդների հետ համահավասար իրավունք[5]» ստանալ և ուրիշ ոչինչ:

Չնայած Փարիզի վեհաժողովում դաշնակից ուժերի միջև եղած տարակարծություններին, այնուամենայնիվ, համիդյան վարչակարգի նկատմամբ ատելությունը միավորեց քաղաքական ուժերը[6]:

---

[2] *Բյուզանդիոն, 29. XII. 1908:*
[3] *Նույն տեղում:*
[4] **Լեո**, *Անցյալից, Ե., 2009, էջ 206:*
[5] **Բայբուրդյան Վ.,** *Օսմանյան կայսրության պատմություն, Ե., 2011, էջ 600:*
[6] *Նույն տեղում:*

Իրականում 1907 թ. դեկտեմբերի 27-29-ի (1908 թ. հունվարի 8-10) հայտարարությունը ցույց էր տալիս, որ երիտթուրքերի կուսակցությունն անշարժ կանգնած էր այն նույն տեղում, որտեղ 1876 թ. հաստատվել էր նրա նախահայրը՝ Միդհատ փաշան: Նրանք ոչ մի առաջադիմություն չէին արձանագրել: Փրկության միակ միջոց դիտվում էր պառլամենտարիզմը[7]: Ուշադրություն չէր դարձվում դրա բովանդակությանը: Ավելին, կուսակցությունների համագործակցությունը շատ կարճ տևեց, ընդամենը մի քանի ամիս: Իրա-կանում գործում էր ամենահզոր ընդդիմադիր ուժը՝ երիտթուրքական կուսակցությունը, որը ոչ մի լուրջ հարցում, հատկապես հայկական բարենորոգումների հարցում, առաջադիմություն չուներ: Ավելին, Հայկական հարցի լուծման բնագավառում նա դարձավ Աբդուլ Համիդի ջերմեռանդ աշակերտը[8]:

Աբդուլ Համիդի միահեծան կառավարմանը վերջ տալու համար մղվող պայքարը շուտով դրվեց գործնական հողի վրա: Դրա համար ազդակ հանդիսացավ Մակեդոնիայում կառուցվող երկաթուղին, որը, ըստ սուլթանի, նպատակ ուներ ամրապնդել թուրք-գերմանական դաշինքը: Սակայն թուրքական ընդդիմադիր ուժերը համոզված էին, որ սա Մակեդոնիային տանում էր «գերմանիզացման., որը կանջատեր այդ երկիրը Օսմանյան կայսրությունից:

1908 թ. հուլիսին Մակեդոնիայում տեղակայված թուրքական գնդերը սպաներ Նիազի և Էնվեր բեյերի գլխավորությամբ ապստամբում են: Սուլթան Աբդուլ Համիդի ուղարկած պատժիչ ուժերը, որոնք իթթիհատականների քարոզչության ազդեցության ներքո էին, նույնպես ապստամբում են: Սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդն իր գահը փրկելու համար համաձայնում է ընդդիմության պահանջին՝ երկրում սահմանադրական կարգեր հաստատելու: Այսպիսով՝ Օսմանյան կայսրությունում տեղի է ունենում պետական հեղաշրջում, որից հետո սուլթանի իշխանությունը կրում է ձևական բնույթ: Երկրում փաստացի իշխանությունը կենտրոնանում է երիտ-թուրք պարագլուխների ձեռքում: Օսմանյան կայսրությունը հռչակվում է սահմանադրական միապետություն:

Երիտթուրքական հեղաշրջումից հետո Օսմանյան կայսրությունում իր քաղաքական գործունեությունը իրականացրեց նաև Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը:

Մի շարք ազդեցիկ դաշնակցական գործիչներ, հատկապես Ան-դրանիկը և Ռուբենը, թերահավատորեն էին վերաբերվում երիտթուրքերի «Ազատություն, հավասարություն, եղբայրություն» կարգախոսին: Դեռ 1908 թ. Ռուբենը Արամին հյուրընկալված օրերին նրան հուշում է. «Դու զինաթափ չպիտի մնաս, և քու հավաքած զենքերը քեզ պիտի վերադարձվին, սահմանադրության իսկ պաշտպանության համար: Եթե սահմանադրական

[7] Լեռ, նշվ. աշխ., էջ 208:
[8] Նույն տեղում, էջ 209:

կառավարությունը վստահի և վերադարձնե, լավ: Եթե չվերադարձնե, ուրեմն անվստահելի է, և մենք ալ տարբերություն չպիտի դնենք հին ու նոր ռեժիմնե-րի միջև»[9]:

Այնուամենայնիվ, սկզբում ՀՅԴ-ն համագործակցեց իթթիհատականների հետ: Հրաժարվելով դրսի միջամտությունից՝ Հայկական հարցի լուծումը նա փորձեց կապել սահմանադրական միապետության ժողովրդավարացման հետ՝ որպես երկրի ներքին խնդիր: ՀՅԴ-ն իր մասնակցությունն էր բերել երիտթուրքերի հաղթանակին և սահմանադրության շրջանակներում գործելու հնարավորություն ձեռք բերեց, որն էլ վերջնականապես հաստատվեց 1908 թ. օգոստոսին՝ Կ.Պոլսում երիտթուրքերի և Սաբահեդինի հետ կայացած խորհրդակցությունից հետո:

1908թ. սահմանադրության վերականգնման մասին լուրը մեծ ուրախությամբ ընդունեցին հայերը, քանի որ նրանք «հաստատակամորեն աջակցում էին նոր իրական օսմանյան պետության զարգացմանը»[10]: Հեղաշրջումից հետո բոլորը ազատ արձակվեցին բանտերից[11]: Մի պահ կարծես հայերը դարձել էին թուրքերի սիրելի հարևանները: Թուրք պաշտոնյաները հարմար առիթը բաց չէին թողնում հայերի հանդեպ իրենց համակրանքը արտահայտելու համար[12]: Թուրք քաղաքացիական ու զինվորական բարձր պաշտոնյաները հայ գործիչների հետ այցելության էին գնում «ազատության համար զոհված նահատակներու շիրիմներուն»[13]:Հատկանշական է նաև այն, որ Իթթիհատ–Դաշնակցություն բանակցությունների շրջանակում իշխան Սաբահեդինի հետ ունեցած խորհրդակցությանը մասնակցող դոկտոր Ռեշիդ Նիհադը դաշնակցականների համար պահանջում էր ավելի լայն արտոնություններ, քան նրանք արդեն ստացել էին[14]: Սա ևս մեկ անգամ ցույց է տալիս, թե թուրքական իշխանությունները քաղաքական ինչ խորամանկ մոտեցում էին որդեգրել հայերի նկատմամբ:

Սահմանադրական պետություն ստեղծելու կարևորագույն առ-հավատյաներից մեկն էլ օսմանյան խորհրդարանի ձևավորումն էր: Խորհրդարանական ընտրություններն անցկացվեցին մեծամասնա-կան սկզբունքով: Յուրաքանչյուր 50.000 ընտրողին մեկ պատգամավոր: 75 հազար ընտրողին արդեն տրվում էր 2 պատգամավոր ունենալու իրավունք[15]: Ընտրական իրավունք ունեին միայն արա-կան սեռի ներկայացուցիչները:

---

[9] **Ներսիսյան Ա.,** *Ռուբեն, Ե., 2007, էջ 127:*

[10] **Мандельштам А.** *Лига Наций. Великие державы и Армянский вопрос, Е.,1981, с. 16.*

[11] **Հարությունյան Ա.,** *Երիտթուրքական հեղաշրջման արձագանքները Վանի նահանգում (1908 թ. հուլիս-օգոստոս) (Պատմաբանասիրական հանդես, 2010, - 3, էջ 49):*

[12] *Նույն տեղում:*

[13] **Փափազյան Վ.,** *Իմ հուշերը, h. Ա. Բոստոն, 1950, էջ 598:*

[14] *Записки Джемал-паши ,1913-1919гг., Тифлис, 1923, с. 208.*

[15] *Բյուզանդիոն, 23. XII.1908:*

1908 թ. հուլիս– հոկտեմբեր ամիսները կարող էին բախտորոշ լինել օսմանյան ողջ հասարակության համար: Երիտթուրքերն իրենց քաղաքական նպատակները և դրանց հասնելու միջոցները ցույց տվեցին հենց խորհրդարանական ընտրությունների ժամանակ:

Օսմանյան խորհրդարանի ընտրություններն անցան թուրք հետամնաց տարրի ազգայնական գաղափարներին համահունչ: Ընտրական պայքարը հիմնականում ծավալվում էր սահմանադրության և հին վարչակարգի կողմնակիցների միջև: Իթթիհատականները իրենց կողմնակիցների մեծամասնությունը ապահովելու համար դիմեցին տարատեսակ ընտրախախտումների և վարչական ճնշումների, որոնց մերկացմանը անդրադարձել է նաև Դամասկոսի «Ալ-Թակադդում» թերթը[16]:

Այդ խայտառակ ընտրությունների մասին տեղեկություններ են պահպանվել նաև Կիլիկիայում պատգամավորության իր թեկնածությունն առաջադրած հայ թեկնածուի շնորհիվ, որը, ցավոք, իր անունը չի նշում. «Թուրք տարրը հակառակ այն գիրկընդխառնումին, զոր ի գործ դրած էր առաջին թափով ուրախության վայրկյանին,...ընտրության միջոցին ուրիշ բան չմտածեց, բայց միայն ամենուրեք հաջողացնելու թրքերու ընտրությունը...»[17]: Ուշագրավ են ոչ միայն թուրքերի ընտրախախտումները, այլև դրանց միջոցները. օրինակ՝ թուրքերը հայ թեկնածուների ընտրությունը խափանելու համար դիմեցին տարատեսակ ընտրակեղծիքների: Օրինակ՝ Ադանայի սանջակի հայկական թաղերը թուրքական թաղերի ու շրջանների մեջ տարրալուծելը, ընտրողների ցուցակում հայերի թվի նվազեցումը (80 հազարի փոխարեն 67 հազար ընտրող[18]), որի նպատակը այդ սանջակի բնակչությանը 2 պատգամավորի փոխարեն 1 պատգամավոր հատկացնելն էր և այլն: Պետական վարչությունների իրականացրած կեղծիքներին զուգահեռ՝ գործում էին հայերին նոր ջարդերով ու կոտորածներով ահաբեկելու, բացահայտ և ծածուկ խախտումներ անելու առանձին մեթոդները, որոնց իրագործումը պայմանավորված էր հայերի անփորձությամբ և թուլությամբ[19]:

Այս ամենի հետևանքով ընտրությունների ավարտից հետո պարզվեց, որ ընտրված հայ պատգամավորների քանակը մեծապես տարբերվում էր Օսմանյան կայսրությունում բնակվող հայության ընդհանուր քանակին համապատասխանող և ակնկալելի թվից:

1908 թ. հոկտեմբերին բացվեց օսմանյան խորհրդարանը: Ազգային կազմը ներկայացնում էր հետևյալ պատկերը. 266 պատգա-մավորներից 125-ը թուրքեր էին, 70-ը՝ արաբներ, 25-ը՝ ալբանա-ցիներ, 23-ը՝ հույներ, 12-ը՝ հայեր, 4-ը՝ բուլղարներ, 4-ը՝ հրեաներ, 3-ը՝ սերբեր և 1-ը՝ ուլահ: Օսմանյան

---

[16] **Եսոյան Մ.,** *Հայկական հարցը Սիրիայի արաբական մամուլում 1908-1914թթ., Ե., 2013, էջ 14:*

[17] *Բյուզանդիոն, 23. XII. 1908:*

[18] *Նույն տեղում:*

[19] *Նույն տեղում:*

կայսրության 27 միլիոն բնակչության մեջ թուրքերը կազմում էին 8-10 միլիոն[20]: Հետևաբար նրանք խորհրդարանում կարող էին ունենալ 80-100 պատգամավոր: Հայտնի է, որ հայ բնակչության թիվը Օսմանյան կայսրությունում 2.100.000 էր, հետևաբար հայ պատգամավորների թիվը կարող էր լինել 21 մարդ: Վահան Փափազյանը իր «Իմ հուշերը» աշխատությունում մատնանշում է 10 հայ պատգամավորների. «Պոլսեն՝ Գրիգոր Զոհրապ և Պետրոս Հալաճեան, Իզմիրեն՝ Սպարթալ և Հակոբ Պապիկյան [Ռոդոստայից], Քուզանեն՝ Մուրատ Պոյաճեան, Էրզրումեն՝ Գ. Փաստրմաճեան (Արմեն Գարո) և Վարդգես, Մուշեն՝ Գեղամ Տեր-Կարապետյան, Սեբաստիայեն՝ Տոքթ. Տաղավարեան, Վանեն՝ Վ. Փափազյան»[21]: Փաստորեն, հեղինակը չի նշել Արշակ Վռամյանին և Կարապետ Փաշայանին:

Խորհրդարանի նախագահ ընտրվեց Սիմեդ Ռիզա բեյը: Երկու ամիս անց ստեղծվեցին խորհրդարանական մշտական հանձնաժողովներ:

Ինչ վերաբերում է կուսակցություններին ու կոմիտեներին, ապա պատգամավորներից 160-ը իթթիհատականներ էին, 20-25-ը՝ ազատականներ (Սիրար կուսակցությունից), 4-ը՝ դաշնակցականներ, 2-ը՝ բուլղար կլուբիստներ, 1-ը՝ սոցիալ-դեմոկրատ և 70-ը՝ անկուսակցական[22]: Ակնհայտ է, որ թուրքերը ցանկացել են մեծամասնություն կազմել երկրի խորհրդարանում: Իսկ մնացած ազգերի և կուսակցությունների հետ պարզապես փորձում էին համագործակցել՝ հույս ունենալով քվեարկությունների ժամանակ ապահովել մեծամասնության ձայները: Սակայն հետագայում պարզ դարձավ, որ երիտթուրքերը սխալվել էին իրենց քաղաքական հաշվարկներում: Բանն այն է, որ մի շարք պատգամավորներ միանգամայն անկախ դիրքորոշում որդեգրեցին և շատ հաճախ քվեարկում էին քաղաքական մեծամասնության ցանկությանը հակառակ: Առանձին մեծ ուշադրության է արժանի հայազգի պատգամավորների գործունեությունը:

Այսպիսով, երիտթուրքական իշխանությունը ձևավորման պահից իսկ դիմել է ընտրակեղծիքների և խախտումների: Ակնհայտ է, որ նման գործելաոճով իշխանության եկող քաղաքական ուժը չէր կարող բարելավել պետության հարստահարվող, ազգային փոքրամասնություն կազմող բնակիչների կյանքը: Հայ պատգամավորներին մնում էր խորհրդարանում սահմանադրության շրջանակներում պայքարել հայ ժողովրդի իրավունքների, անձի և գույքի ապահովության համար:

МЛАДОТУРЕЦКИЙ ПЕРЕВОРОТ И ФОРМИРОВАНИЕ ПАРЛАМЕНТА ОСМАНСКОЙ ИПЕРИИ В 1908 Г.

---

[20] **Համբարյան Ա.**, *Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում (1908-1914), Ե., 1979, էջ 14:*

[21] *Ծիածան, 20. IX. 1909,* **Փափազյան Վ.**, *նշվ. աշխ., հ. Բ, Բեյրութ, 1952, էջ 92:*

[22] **Համբարյան Ա.**, *նշվ. աշխ.:*

МАРТИРОСЯН Н.М.

Резюме

В армянской историографии главенствует точка зрения, согласно которой комитет "Иттихад ве теракки" ("Союз и прогресс"), сотрудничая с оппозиционными силами Османской империи, после прихода к власти раскрыл свои истин-ные внутриполитические цели лишь в апреле 1909г., организовав и осуществив погромы в Киликии. До погромов в Киликии деятельность комитета "Иттихад ве теракки" не вызывала каких-либо подозрений в "недружеском" отношении к армянам. Однако младотурки свои политические цели про-демонстрировали во время парламентских выборов. Хоть и методы фальсификации выборов были разнообразны, но цель была одна – сформировать такой парламент, в котором турки и, в частности, представители партии младотурок будут представлены в большинстве.

YOUNG TURKS' COUP AND THE FORMATION OF PARLIAMENT IN OTTOMAN EMPIRE IN 1908

N. MARTIROSYAN

Abstract

In the Armenian history, there is a theory according to which the Committee of Union and Progress revealed its true political goals ascending to power and in alliance with the opposition forces only in April 1909 (organizing Kilikia massacres). Before, it never seemed to have raised any suspicions of its attitude to the Armenians. This misconception is due to the incomplete coverage of Ottoman parliamentary elections. The Young Turks demonstrated their political goals and means of achieving them during the parliamentary elections. "The Byzantium" of Constantinople and "The Al-macadam" of Damascus published at that time illustrate these events. Although the Young Turks' entertained different ways of falsifying the elections, their joint goal was to represent a majority in the parliament.